Հաստատում եմ

Հայաստանի շախմատի ֆեդերացիայի

նախագահի առաջին տեղակալ

Ս.Լպուտյան

«21» «Հունիսի» 2019թ.

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՇԱԽՄԱՏԻ 14-ՐԴ

ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ Ի-ԻԻ ՓՈՒԼԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

2019թ.

1. Դպրոցականների շախմատի օլիմպիադայի նպատակներն ու խնդիրներն են.

1) նպաստել ՀՀ դպրոցականների շրջանում շախմատ մարզաձևի զարգացմանը, լայն թափ հաղորդել նրա մասսայականացմանը,

2) շախմատ մարզաձևը նպատակաուղղել սովորողների բարոյաֆիզիկական և հոգևոր հատկանիշների դաստիարակմանը,

3) նպաստել դպրոցականների ունակությունների և հմտությունների զարգացմանը, նպատակաուղվածության դաստիարակմանը,

4) ի հայտ բերել շնորհալի մարզիկներին՝ նրանց հետագա մարզական կատարելագործումն ապահովելու համար:

2. Շախմատի օլիմպիադայի ղեկավարումը.

Շախմատի օլիմպիադայի ընդհանուր ղեկավարումն իրականացնում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը՝ Հայաստանի շախմատի ակադեմիայի, տեղական ինքնակառավարման մարմինների կրթական ստորաբաժանումների աջակցությամբ:

Շախմատի օլիմպիադայի մրցանակները տրամադրում է Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ):

3. Շախմատի օլիմպիադայի մասնակիցները, փուլերը և անցկացման ժամկետները.

1) Շախմատի օլիմպիադայի մրցաշարերին կարող են մասնակցել մինչև 14 տարեկան դպրոցականները (2006թ և բարձր):
2) Շախմատի օլիմպիադան անցկացվում է թիմային հաշվարկով (թիմը բաղկացած պետք է լինի 4 աշակերտից, որոնցից առնվազն 1-ը՝ աղջիկ):
3) Շախմատի օլիմպիադան անցկացվում է չորս փուլերով:

I փուլ - ներդպրոցական մրցումներ:

Այս փուլի նախապատրաստման և անցկացման պատասխանատվությունը դրվում է հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների վրա:

Հայաստանի Հանրապետության բոլոր հանրակրթական դպրոցները կազմակերպում և անցկացնում են ներդպրոցական մրցումներ մինչև 14 տարեկան դպրոցականների միջև՝ դպրոցի հավաքական թիմ (թիմը բաղկացած պետք է լինի 4 աշակերտից, որոնցից առնվազն 1-ը՝ աղջիկ) ընտրելու նպատակով, որը և կմասնակցի հաջորդ՝ համայնքային (տարածաշրջանային) II փուլին:
Ժամկետը՝ 2019թ. հոկտեմբերի 1-ից մինչև հոկտեմբերի 20-ը:

II փուլին մասնակցելու հայտին կից բոլոր դպրոցները պետք է ներկայացնեն մրցաշարի անցկացման աղյուսակը:

II փուլ - համայնքային (տարածաշրջանային) մրցումներ:

Մասնակցում են նախորդ փուլում իրավունք նվաճած դպրոցների հավաքական թիմերը: Անցկացվում է մեկ ընդհանուր թիմային մրցաշար: Յուրաքանչյուր համայնքի (տարածաշրջանի) հաղթող թիմը դուրս է գալիս III՝ մարզային փուլ:

Ժամկետը՝ 2019թ. հոկտեմբերի 25-ից մինչև նոյեմբերի 20-ը:

Շախմատի օլիմպիադայի II փուլի անցկացման կանոնները.

1) Մրցաշարի II փուլն անցկացվում 1 ՖԻԴԵ-ի արագ շախմատի կանոններով: Խաղացողին տրվում է 10 րոպե մինչև խաղի ավարտը՝ յուրաքանչյուր քայլի համար 5 վայրկյան հավելումով:

2) Կանցկացվի թիմային մրցաշար՝ շվեյցարական մրցակարգով, 9 խաղափուլով:

Մրցանակային տեղերը կորոշվեն ըստ.

ա) թիմային միավորների հանրագումարի (հաղթանակը գնահատվում է՝ 2 միավոր, ոչ-ոքին՝ 1 միավոր, պարտությունը՝ 0 միավոր).

բ) թիմի անդամների անհատական արդյունքների հանրագումարի.

գ) եթե այդ ցուցանիշն էլ է հավասար, ապա անցկացվում է լրացուցիչ մրցախաղ (մրցաշար-մրցախաղ՝ կայծակնային խաղի կանոններով յուրաքանչյուր, խաղացողին տրվում է 5-ական րոպե):

Թիմերի քիչ քանակի դեպքում հնարավոր է.

ա) մրցաշարն անցակացնել 7 կամ 5 խաղափուլով,

բ) անցկացնել թիմային մրցաշար՝ շրջանային մրցակարգով: